

ՀԱՅԿԱԶՈՒՆ ՎՐԴ. ՆԱԶԱՐՅԱՆ

ԵԹԵ ՄՈՌԱՆԱՄ ՔԵԶ, ԷՋՄԻԱԾԻՆ, ԹՈՂ ՉՈՐԱՆԱ ԱՋՆ ԻՄ (ՔԱՐՈԶ)

«Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ մոռասցի զիս աջ իմ: Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ՝ թէ ոչ յիշեցից զքեզ» (Սղմ. ՃԼԶ 5—6):

Սաղմոսերգուն այս բառերով հիշում է Երուսաղեմը՝ հեռավոր Բաբելոնում, իր գերության մեջ: Ինչո՞ւ այսքան խիստ խոսքերով է արտահայտվում սաղմոսերգուն: Իհարկե իր հայրենի քաղաքը, իր հայրենի տունը սիրելի է նրան, և հեռու ու պանդուխտ լինել այդ տնից՝ ցավալի երևույթ է: Սակայն սաղմոսերգուի համար Երուսաղեմը առաջին հերթին Աստուծո տունն էր՝ տաճարը, որ գոյություն ուներ Երուսաղեմի մեջ իր սրբություն սրբոցով՝ Աստուծո և մարդու միացման վայրը աղոթքի միջոցով: Այսօր, երբ մոտենում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին որաժեշտ տալու ժամը, այս բառերը ինձ համար այսպես են հնչում. եթե քեզ մոռանամ, Էջմիածին, թող չորանա իմ աջը, եթե քեզ մոռանամ, թող պապանձվի իմ լեզուն, թող իմ լեզուն կպչի իմ քիմքին:

Էջմիածինը, սիրելի ժողովուրդ, երկնքից առաքված մի խորհուրդ է հայ ժողովրդի համար: Քրիստոս ինքն իջավ այստեղ Գրիգոր Լուսավորչի տեսիլքով, որպեսզի մեր ժողովուրդը իր ժողովուրդը դարձնի: Սակայն Էջմիածինը միայն երկնառաք մի տեսիլք չմնաց Գրիգոր Լուսավորչի հոգու մեջ, այն Լուսավորչից սկսած մարմին առավ, դարձավ տաճար, դարձավ հանդիպման վայր՝ Աստուծո և հայ ժողովրդի համար դարեր շարունակ: Եվ այդ դարերի ընթացքում աղոթքների և երգվող շարականների միջոցով, վեր առաքվող խնկաբույրի միջոցով հայ ժողովրդի աղոթքը բարձրացավ դեպի Աստված, և հայ ժողովուրդը միացավ իր Աստծուն: Սրբություն սրբոց է հայ ժողովրդի համար Ս. Էջմիածինը: Հետևաբար նա, որ գալիս է այս եկեղեցին աղոթելու, առանձնանում է իր հոգով, նա անպայման իր սրտի խորքում հիշում է դարեր շարունակ երկինք բարձրացող այդ աղոթքները, նա հաղորդվում է մեր բոլոր սրբերին, սկսած Գրիգոր Լուսավորչից, և գտնում ճշմարիտ ուղին, ճշմարիտ Աստծուն: Սրբությամբ և երկյուղածությամբ պետք է մոտենանք մենք այս տաճարին: Երբ Մովսես Սինա լեռան վրա իր կոջիկն էր հանում, որովհետև անկեզ մորենու մեջ տեսավ Աստծու պատկերը և լսեց Աստծու ձայնը: Մենք՝ հայ քրիստոնյաներս, երբ Ս. Էջմիածնում լսում ենք Աստծու ձայնը, պետք է հանենք մեր կոջիկները, այսինքն մեկդի դնենք մեր մեղքերը, մեր անձնական հարցերը և բացենք մեր սրտերը Աստծու առջև, որպեսզի կարողանանք իսկապես միանալ Աստծուն: Դարեր շարունակ Հայ Եկեղեցին Էջմիածնով լույս հանդիսացավ մեր ժողովրդի համար: Երկնառաք այս լույսից ուղղություն տրվեց հայ ժողովրդին, ամենուրեք հայ ժողովուրդը ետ դարձավ և նայեց Սուրբ Էջմիածնին և նրանից ուղղություն վերցրած գտավ իր ճանապարհը դեպի հավիտենականություն: Հետևաբար Էջմիածինը սոսկ երկնքից ուղարկված տեսիլք չէ մեկ համար, Էջմիածինը նաև Աստծու հավատքի պատմություն է, Էջմիածնի միջոցով խոսում են մեր սրբերը, մեր հայրերը՝ մեր լեզվով, մեր հայրենի օդով, արևով և մեր զգացումներով: Եվ ամեն մի հայ, որ երկնակամարի տակ էլ գտնվի, եթե

հեռանա Սուրբ Էջմիածնի խորհրդից, կը-կորցնի իր ճանապարհը և խարխափումի մեջ կգնա ու կկորչի: Նույնն է պարագան նաև այսօր մեր հավատավոր ժողովրդի համար ամեն տեղ:

Տարիներ առաջ ես էլ, որպես փոքր մի պատանի, ունկնդրելով իմ խղճի ձայնին, ենթարկվելով Աստծու կանչին, եկա և մուտք գործեցի Սուրբ Էջմիածին: Եվ մի քանի տարիներ շարունակ ուսանելով այստեղ, կամաց-կամաց իմ մեջ բացահայտվեց այս խորհուրդը և իմաստ ստացավ: Տարիներ հետո, որպես ճեմարանավարտ սարկավագ, արժանացա Վեհափառ Հայրապետի՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա-ի ուշադրության. ուղարկեց Անգլիա, այնտեղ բարձրագույն կրթություն ստանալու: Եվ այնտեղ, Անգլիայի մառախլապատ օդերում, օտար հոգիների ոլորտում ես երբեք չկորցրի իմ լույսը, որովհետև միշտ Էջմիածնի կանթեղը՝ Լուսավորչի կանթեղը հեռվից ինձ լույս էր տալիս և առաջնորդում ինձ իմ տկար, դժվար և նեղ օրերին: Եվ այդ ձգողական ուժը դեպի Էջմիածին ինչքան գնում, ավելի զորավոր էր դառնում: Եվ այդ նույն ուժը ինձ բերեց այստեղ: Ահա շուրջ հինգ տարիներ ծառայեցի ես Մայր Աթոռում, վայելելով միաբանության ուրախությունները և տխրությունները, արժանանալով ավագ հայրերի ուշադրության և հոգևոր խնամքին: Հասել է ժամը, և Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ մի քանի օր հետո կմեկնեմ Հյուսիսային Ամերիկա՝ ծառայելու Արևելյան թեմի մեջ: Բայց հայ եկեղեցականի գիտակցությամբ է, որ ես պանդխտության ցուպը ձեռքս եմ առնում, իմ հոգու խորքում ամբարելով հայ արևը, Էջմիածնի խորհուրդը, որովհետև հայ եկեղեցականը զոհվող մարտիկ պետք է լինի հանուն իր ժողովրդի և հանուն իր կրոնի: Հետևաբար հայ եկեղեցականը միայն իր անձով չի կարող բավարարվել, միայն իր հոգու փրկությամբ չի կարող զբաղվել: Իմ պարտականությունն է այնտեղ նաև հայ արևի, հայ հողի և Էջմիածնի ուժը, խորհուրդը և պատգամը տալ Սփյուռքի մեր ժողովրդին և եղբայրներին: Շուրջ տասը տարի առաջ էր, երբ ես կուսակրոնության երդում տվի Աստծու սուրբ խորանի առջև:

Տասը տարիներ են անցել այդ օրից, և իմ բոլոր դժվարին ու նեղ պահերին ես աշխատել եմ հավատարիմ մնալ Սուրբ Էջմիածնի խորհրդին, այն երդումին, որ տվել եմ Սուրբ Էջմիածնի միջոցով Նորին Սրբությանը և մեր ժողովրդին: Եվ այսօր ես կմեկնեմ հեռավոր Ամերիկա, դարձյալ երդվելով, որ իմ ամեն մի քայլով, իմ ամեն մի գործով Սուրբ Էջմիածնին հավատարիմ եմ մնալու, և եթե ես երբևիցե խոտորեմ իմ ճանապարհից, և եթե մոռանամ Էջմիածինը, թող իմ աջը չորանա և թող իմ լեզուն պապանձվի, ինչպես պիտի ասեր սաղմոսերգուն:

Աղոթք, սեր եղիցին ընդ ամենեսեանդ, ամեն: